











# ՏԵՐԵՎԱՆ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ



ՅԵՐԵՎԱՆ  
1923



891.381

# ՏԻԳՐԱՆ ՀԵՒԱՒՄՅԱՆ

891.99

3-16

Բանական գիտություններ

I

7826



Հ 66832



ՅԵՐԵՎԱՆ

1928

20847



386107

00000000

# ՅԵՐԿԱՒ ԽՈՍՔ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԹԻՎ

Այս ժողովածուի մեջ ամբողջ սցված քանաստեղծությունները պրվան  
1918-ից՝ 1923 թվականի ժամանակաշրջանում՝ Ավելի ճիշտ, այսուեղ  
այսին հատվածն և միայն այն ամբողջի, վորի գերաճնշող մեծաս-  
լունը յերբեք չպետք է լույս աշխարհ տեսնի:

Այս ժողովածուի մեջ յես տալիս եմ այն և միայն այն, ինչ այսոր  
առվարարում և պոեզիայի և արվեստի մասին ունեցած իմ ըմբռնում-  
բնի նորիշ խոսքով. այն, ինչ յուրացրել եւ պոետական արվեստի մինչ-  
մյան փորձն ու նվաճումները և ինչ անկեղծ և և անբռնադատ՝ իր ար-  
հայության ձևի և ներքին բովանդակության մեջ:

Այս գիրքը գրել եմ յես. մի մտավորական, վորն ապրում և ահազոր և  
արհացունց մի ժամանակաշրջան, վորի աշքերը տեսնում են նոր ը և ա-  
յները լուս են կանչերն ու ազմուկները նորոգ որերի և առկայն՝ վո-  
րհոգեկան հուզաշխարհը անկառկածորեն յենթարկելով վերափ ոխման  
ոյդ եվոլյուցիան ապրում և յերկարատե անցման շրջանի բոլոր պահ-  
աժան վողքերգությունները:

Այս գիրքը—յես եմ. ահա թե ինչու նա չունի և վճէ մի ուրիշ վեր-  
աբություն. Ավելորդ եւ Յեթե ճիշտ ե, վոր ամեն մարդ ծնունդ և վորոշ  
անակի և միջամայրի, ապա այս գիրքն ել ծնունդ և այդպիսի մի վո-  
րամանակի և միջամայրի պայմաններում ապրող պոետի:

Նրան քննադատելն ամենքի իրավունքն ե, նրան հասկանալը՝ ամեն-  
արիկամեցողության խնդիրը:

Հեղինակը սրանով ասում և ամենը և նրան հուսագրողն այն պարզ  
կցությունն ե, վոր նա կուլտուրապես հետամզիչ հարված չի հասցըել  
պայեզիային հրատարակելով իր այս ժողովածուն:

Այսօն:

Է. Հ.

9-11卷  
列傳第9卷

~~11. VI. 92~~

~~36~~

... Oh! pauvre âme, c'est cela...

*Paul Verlaine*

«... Քանիցս պիտի դողաս անփարաս  
յերկու աշխարհի սահմանագծում...»

Վահան Տերյան



Ճամբի վրա անող, մենակ՝  
ուստ քարուն ու չարին՝  
թել եմ մանում յերկար-քարակ,  
վոր ինձ կապեմ աշխարհին.



Շատ ե ներել վիշտ ու ցավ անմահական իմ հոգին  
ու վոչ մեկին չի ասել.—«ակն ընդ ական» իմ հոգին,  
և հիմա յել իր ճամբին—գեղի անհայտ մշուշներ՝  
շադ և տալիս իր վուկին արքայական իմ հոգին։

Զան, իմ սիրտ, զըինգ մնա. ես շաբը քեզ չորսըի,  
ես որն ել եսպես կերթա. նեղությունն ել կպորի.—  
զալում կաց, յերգով մնա. վայ քեզ, թե վոր լուսաբացին  
եշխ ումըդ պակաս յեղար՝ որըդ սևով կվորի:

կը կատարվի մի որ են—մեծ խորհուրդը սրբազն։  
հեռու ձայնը կլսվի սրտումը խոր, անսասան,—  
և կմնան ես կողմում չարը, բարին, վիշտ ու սեր  
ու ստվերներն իմ հոգու, վոր իմ յերթին չհասան։

Դսացի՞ն, սիրտս տարմն. չտեսա կաթե՛ լն որերի,  
մասց թափուր իմ հովուր հոգին. չիմացա ծլելն որերի,—  
հիմա եսպես շիվմը, մոլոր ձեն եմ առնում յերկու ափից՝  
և են որից կորա՛վ, գնա՛ց ու կարվեց թելն որերի:

Ինչու յես դողում, ինչու. մի որն ել եսպե՞ս կըլի, —  
լավ որն ել կգա, վատն ել. տխուրն ել եսպես կըլի,  
վախում ես սիրտը մաշվի. զե հուրն ել եսպես կըլի.  
կխոցի, կերի, կերթա՝ իզնւըն ել եսպես կըլի...

ՈՌ, համբերի՛ր, սի՛րտ իմ անող. ջրերն անցան՝ քիչ մնաց,  
շարեր շատ կան բարին տանող. հրերն անցան՝ քիչ մնաց,  
մտի՛կ արա սարիդ լանջից ճամբիդ բարակ թելը բաց՝  
ինչ ե ասում ման ականջիդ. որերն անցան՝ քիչ մնաց:

Արևշողեց՝ գնաց, իմ յարն ազիզ՝ գնաց,  
 խենթ եր, հուր հր՝ այրեց, փարեց վզիս՝ գնաց,  
 մեն մի համբյուր տռա, մի անմռռաց համբույր,  
 ինձ մի հեքիաթ պատմեց, դողաց գըկիս՝ գնաց:  
 Հիմա քեզ եմ կարոտ, յար իմ, ալ-հրահուր,  
 արեների ծովում՝ իմ յերկնակալ ուրուր,  
 կամքըս տարար քեզ հետ, սիրոս մնաց անբույր՝  
 արևշողեց նազով իմ յարն ազիզ՝ գնաց:

**Մի** շող իջավ յերկնից, մի հրեղեն աղջիկ,  
աչքերը՝ ծռվ անծիր, ցող ու շաղեն աղջիկ,  
սիրո ասպետն արի սրտիս դռանն իջավ,  
սրտիս դուռը զարկեց մի լուսեղեն աղջիկ:

**Ասաց.** — դուռըդ յել՝ բաց, արև ճամբից յեկա,  
ծարավ եմ քո ջրին. տուր ինձ շուտով. թե կա...  
բացի դուռը յերկաթ. յերգ ու խաղով մտավ  
իմ սիրտը անշողշող՝ հեռու տեղեն աղջիկ:


**Ասի.** — բարով յեկար, իմ որվերջին կարուտ,  
սիրտը այրվեց՝ գնաց—քո բոցերին կարուտ,  
և որըս, խելագար, յերազ ճամբով անցավ  
մի շող իջավ յերկնից, մի հրեղեն աղջիկ:

նեկան, զարկեցին իմ գուռը. զարկեցին իմ սրտիս գուռը,  
սսին. պատրաստ կաց, մեղավոր, — շողշողում և մահվան սուրբ,  
ասի. յես ով, մահն ով, խենթեր. ով և չափել չափն իմ հոգու,  
ևս չեմ գնա, չեմ մահանա՝ մինչեւ չերպի կյանքիս հուրը:

Ասին. ով գիտի, թե վորքան կալեկոծվի սրտիդ յերդը,  
աշխարհն այրեցիր քո տաղով. յեկ, հասիր ճամբիդ յեզերը,—  
ասի. յես ով, մահն ով, խենթեր. ով և տեսել ափն իմ հոգու,  
ևս չեմ գնա, չեմ մահանա՝ քանի շեն և յերդիս բերը:

Ասին. ցավեր շատ կունենաս. ասա՝ գտնենք գեղն ու ճարը,  
եր քո սիրտըն ախ չքաշի, յերը վոր հատեց խերն ու շառը, —  
ասի. յես ով, մահն ով, խենթեր. ով և տպրել թափն իմ հոգու,  
ևս չեմ գնա, չեմ մահանա՝ քանի սիրտըն բոց ու վառ ե:

A-66832



Ականաշխարհ իմ հայրենի, բարձրաբերձ իմ Հայաստան,  
ծերպերից քո ժայռերի՝ մշուշներ ու հեռաստանն,  
սիրտըս բաց և քո առջև, հրաշիթ քո ճամրեքին,  
ու յելնում և խոր խորից ծով կարուն իմ անմեկին:

Դոդանչում են խավարում զանգակները հողմահար  
ու ձայնում են ու կանչում ծաղիկները արնահամ,  
և դոզում և իմ հոդին՝ անրարրան, անապաստան,  
հուշաշխարհ իմ հայրենի, լեռնարաշ իմ Հայաստան:

վոչ մի յերկրում հեռավոր գիշերները պարզըկա  
այնքան զով չեն ու անդորր՝ վոչ մի յերկրում հեռավոր..  
վոչ մի սրտում լայնասիրտ այնքան կարոտ, հուշ չկա,  
վորքան սրտումն իմ յերկրի՝ հազար ձեռքից վիրավոր:

վոչ մի յերկրի դաշտերում՝ հեռատարած ու տխուր  
այնքան մշուշ չի դողում յերազներից բյուրավոր,  
վոչ մի յերդում սիրավառ չկա այնքան ցավ իզնւր,  
վորքան յերգումն իմ յերկրի՝ կարկաչահոս, թհավոր:

վոչ մի յերկրում դեպի վեր, դեպի ամպերն ու արե  
չի վեհանում ձյունարաշ ձեր Մասիսը փառավոր,  
վոչ մի հոգում լայնազոր չկա այնքան թափ ու թե,  
վորքան հոգումն իմ յերկրի՝ շող մի, շողշող առավոտ:

Պաղ ջրերիդ ավիին գամ ու նոտեմ, լսեմ,  
կարկաչներիդ ձուլեմ յերզը սրախա՝ անափ,  
թող չցագի հոգիդ, յերկիբ իմ վեհ, վսեմ,  
իմ հայրենի աշխարհ՝ հպարտ ու անսարսափ:

Քո լեռների ծոցին հաղար քար ու քանդակ,  
հաղար հուշ ու անուն՝ անհայտ կամքի կրթող,  
յերազների յերկիբ, աշխարհ բարձրավանդակ,  
քո անցյալում փայլեց քանի՛ արև ու շող:

Միրտը հանգչի հոգնած, աստղերը վեր ցոլան,  
ծարավ հոտաղը գա՝ ու ջուր խմի զվարթ,  
հեռուներում կանչի իր ազանը մոլան —  
և ամենը մեկտեղ քեզնով լինին հպարտ:

Իմ հայրենի յերկիբ, աշխարհ՝ իմ Հայտաստան,  
քո դաշտերում արձակ սիրտը թաղեմ՝ սիրող,  
վոր ժողովուրզը քո՝ ցրիվ, անապաստան՝  
գա, վոտնակոխ անի զերեզմանը նիրհող:

Ում տվի սիրալս անկուշաւ. խաղ ու պարիցն ի՞նչ շահեցի,  
ում համար հողիս երվեց. սիրած յարիցն ի՞նչ շահեցի,  
գանձերը տվի տարան. խեր-խարարիցն ի՞նչ շահեցի,  
որը մութ, ճամբես վոլոր. և աշխարհիցն ի՞նչ շահեցի:

Հաղարներ աշք ածեցին, թե մի որ իմ լավը տեսնեն,  
ախր չի լի, վոր ամենից մենակ ցավն ու դավը տեսնեն,  
բացի ծով սիրալս ցամաք, վոր նրա ծարավը տեսնեն.  
վոր տեսան՝ ի՞նչ իմացան. խեղճ անճարիցն ի՞նչ շահեցի:

Դուռը բաց որը անցավ՝ և ամենն իմ թափը տարան,  
յերգերի կարոտները իմ սրտի հուր ծափը տարան,  
ձեն տվին, Շայիր-Տիզը ան, և են ժխոր ափը տարան.  
վոր յեղա ամենի հետ՝ ևս հավարիցն ի՞նչ շահեցի:

Այս, չերվեր ես քյոֆուր կյանքը. մի քանի որ լավ տեսնեաւ ու դարավոր վիշտապ-չարը՝ անտառամ, անդավ տեսնեցի, վրաքըս դնեցի գերեզման՝ աշխարհըս անցավ տեսնեցի. որի ու հրի փոխարեն՝ կենաց կարմիր դավ տեսնեցի:

Ճանաչեր մարդն իր մեծ հողին. չքարանաբ կըալրի նման ու լին բանար սիրար հոժար՝ հարսանիրի սուփրի նման, լուսնի ծորում լուս հանդչեցի՝ խորահատակ ջրը նման, սիրաբա շողերով ակսառդ բարեհամբավ նավ տեսնեցի:

Յերանի են դալոդ շնչին, վոր իր դալուց խարար չունի և են ծառին, վոր կծաղկի, բայց եսօր դող ու բար չունի, յան Շահիր-Տիգրանըն ասեց. իմ գարունը նուրար չունի՛ միայն թէ ես որը միմած արեի ծարավ տեսնեցի:

Չան, հուր որեր յեկան. Չան, սև սիրտըս բոց ելավ,  
Չան, յերգըս մահեցի՝ ու դարդըս քարկոծ ելավ,  
և լեզուն իմ պապանձ, Չան, խայթող ալ ոճ ելավ,  
Չան ասի, Չան առի, արելս հուր հընոց ելավ:

Իե, արի, Չան անուշ, դուռըս բաց ա, ձեն արա,  
ով կարա ինձ կապի. թե կրլի՝ անզեն արա,  
թող գնա, հեռանա. զու իմ որն առ՝ շեն արա,  
Չան, տեսնես զու զիտես, վոր եշխըս անխոց ելավ:

ՀԵՅ, աշխարհ, դարբեղար, իմ սիրտը, Չան, խառ ջուր ածիր,  
քեզ լինի տվածըդ՝ սև հոգսերն իմ դուր ու ցիր,  
Չան իմ, Շայիր-Տիգրան, շախ որվա ալ դուռ բացիր.  
և յերգն ել հին ցամին սրտալի հոգնց ելավ:

Խաս թելդ բարակ մանիք. թող յերկարի որն ու բարին,  
դարդ ու ցավ քամին տանի. ել յեղ հասնենք նոր նուրարին,  
ի՞նչ զիտի սիրտըն անճար, վորն և չարր, վորն և բարին՝  
հազար բան կառնի, կտա, մինչև հասնի նոր նուրարին:

Բաց արտ ծոր կծիկըդ. ճամբեն ծալվի նազ ու շորոր,  
լուսնյակը Նար-դավի պես՝ զնդա, տանի որն ու բարին,  
ձեն առնի թելը սրտիս՝ ու դողդողա նազ ու շորոր,  
ով կասի. շատ կա, թէ քիչ՝ մինչև հասնենք նոր նուրարին:

Կանգնել եմ ու կանչում եմ. ձենըս հասավ ծով, անապատ,  
են խորքը, ուր թաղվեցին անցածների որն ու բարին,  
թէ զիշեր, թէ բարիլուս պիտի տեսնեմ ծով, անապատ,—  
մինչև բացվի կամքըդ հոժար՝ ել յեղ հասնեմ նոր նուրարին:

Շայիր-Տիգրան, ջան Շահընշահ, աշխարհը ի՞նչ խեր կտա քեզ  
վոր ասիր. ել չեմ կարող. թող շուտ բացվի որն ու բարին...  
ի՞նչ ունես, վոր երվում ես. սրտիդ բոցը խեր կտա քեզ,  
վոր զնաս՝ մոխիր դառնաս, մինչև հասնես նոր նուրարին:

Այդումըս վարդ ունեյի՝ աշունը վարդըս տարավ,  
սրտումըս զարդ ունեյի, որերն իմ զարդը տարան,  
ասի. յար, այստեղ մնա. Հսեց՝ անցավ, զնադ,—  
իմ սիրած սիրան անարատ այն ոտար մարդը տարավ.

Ու տեսա յերազիս մեջ իմ յարին խեղճ ու մենակ,  
ամենից թողված, անտեր՝ հուշերին սիրոը հենած,  
կանչեցի՝ ձայն չտվեց իմ կորած անուշ բալեն՝  
լաց յեղա. արյուն կաթեց՝ իմ սիրաը դարդը տարավ:

Հե՞յ, ասի. անուշ, անուշ, իմ դադրը դու վժնց չառար,  
վժնց անցար սրտիս մոտով՝ չտեսար հուրըս վառած,  
խոցեցիր սիրոըս նազան. ցավեցիր դառն ու դաժան՝  
ըս բարակ սիրոը սիրոդ այն թագուն սարդը տարավ...

Աշխարհը մեկ որ և բացվում, լսիր, իմ անուշը, մեկ որ,  
լավերն ել, ավերն ել սրտիդ թելերն են մանում՝ մեկ որ,  
մի կտարիի ուրիշի խոսքին. կմնաս անուժ մեկ որ՝  
և կզա դիշերը վերջին՝ ու կերթաս անհուշ մեկ որ:

Կլինես սրերից մեկին ամենից հեռու, անդարձ,  
հազարը կանցնեն քեզ ոտար՝ չեն հիշի սիրտը քո դառն,  
մշտագոց աչքերիդ մարած կփռվի մունջը անթարթ՝  
և արե զու ել չես տեսնի խավարում անհուն մեկ որ:

Ի՞նչ կանես, վոր ասիր, ափոսա՝ ել չե վոր իզուր և զուր  
ել ով ե քեզ հուր տալու, հեյ, ջան իմ, քար անլեզու,  
ինչքան ել վառվուն շողան աչքերդ խոցող ու սուր՝  
ախ չե վոր քո սիրտը անկուշու կմաշվի զնդանուժ մեկ որ:

Հեյ զիտի, ջան Շայիլ. Տիպրան, ուրիշի դարդն ես քաշում՝  
քո սիրտն ել այդպես կմարի՝ և զու ել կըմեաս անշունչ.  
ել ի՞նչ ես այրվում՝ սրտավեր. գարնան թե ամառ, աշուն՝  
կթողնես քո սիրտը հողին, մոխիրըդ՝ քամուն մեկ որ...

Անիվ ե, չար ե, կճղմի՝ կերթա.  
 թե զիտես, ջան խմ, զլխիդ ձարը տես.  
 թե շղխացար, ուժդ շնաղթեց՝  
 անիվ ե, չար ե, կճղմի՝ կերթա.  
 թժվար ե, քար ե ուղին վերընթաց  
 ե սիրոը անող ե, հողին՝ նազ ու հեղ,  
 ա, կյանքը չար ե, կճղմի՝ կերթա.  
 թե զիտես, ջան խմ, զլխիդ ձարը տես...

Դու հիմա հեռանում ես և կարծում ես, թե այդ ե,  
 կարծում ես թե հեշտ ե, վոր սիրալ մարի,  
 և այնպես դու անփույթ ես, ոտար ոտարից՝  
 և հիմա հեռանում ես և կարծում ես, թե այդ ե:  
 Բայց գիտե՞ս, վոր սիրալ մի անհուն անհայտ ե,  
 մի խելառ առավետ ե՝ հրկում և արի...  
 ո, ինչքան միամիտ ես, վոր կարծում ես, թե այդ ե,  
 կարծում ես թե խաղ ե. վոր ուղես՝ կմարի...

Ասում ես խոսքեր անուշ,  
շոյում ես հուր-հրատու,  
ժպտում ես ու դառնանում,  
խոցում ես այնպէս հատու:

Դրկում ես քաղցր-ու սուտ,  
սեղմում ես այրող տապով,  
խուսափում և հար հուզում  
աչքերով՝ այնպէս խաբող:

Տանջում ես դառն ու մորմոք,  
խանդում ես տենդով հրհուր,  
ցալագար սիրտս անոգ  
բոցում ես այնպէս դարհուր:

Առնում ես անխոս, գերի  
իմ սիրտը՝ մերկ ու անզարդ,  
բոցակեղ իմ խոսքերից  
գողում ես այնպէս սարսած:

Սիրում եմ, քեզ, իմ դահիճ,  
իմ սիրտը խոցող դու սնւր,  
ո՛, քաղցր ես անուշ մահից,  
իմ յերազ, այնպէս իզնւր...

Որերում իմ այս ցուրտ ու դաժան  
ա, ինչ դառն ե հիշել քո անունը  
և զգալ, վոր մարեց տարածամ  
աշքերիդ ինձ մաշող հրահուրը:

Յեվ զգալ, վոր զու կաս ու ժպտում ես,  
վոր շոյում ես, զրկում, համբուրում,  
և այրող քո շուրթերը հպում ես  
ուրիշին և զերում, զուրդուրում...

Յեվ զգալ, վոր ցնցող և իզուր  
անամոր մի տագնապ ես, անհաս ես,  
և որերը՝ անզութիւն, սայրասուրը՝  
մորմօքեն իմ ցնորքն ու յերազը:

Յեվ իջնի զերաչար սև զիշերը,  
և զողաս՝ կալանված և անհապ,  
և զգաս, վոր քո կամքը իջել և՝  
և զու զաս՝ և զնաս խանդահար...

Այսում ես, խոցում ես աղեղնավոր աչքերով քո,  
 զանապատիր աչքերով քո՞ մշուշով քողած,  
 մաշում ես իմ սիրտը՝ խաղերին քո նոխազ,  
 իմ սիրտը բոցում ես աղեղնավոր աչքերով քո:  
 Անամոք մի մօրմօք ե, այրող մի ողակ.  
 Ճղել ես, քաշում ես ձեռքերով շար, գերող քո,  
 խոցում ես, խոցում ես աղեղնավոր աչքերով քո,  
 հրենիզակ աչքերով քո՞ մշուշով քողած...

Պիտի մի որ ասես. զարձիր,  
պիտի մի որ փայլրդ մարի,  
որերի դաժան ցանցից  
պիտի ասես. սեր իմ, արի:

Պիտի նայես շուրջըդ ոտար,  
պիտի խոցվի սիրտը քո վորը,  
և ել ում, ել ում կտաս  
քո անհուն ցավն ահավոր:

Յեզ ել ում կասես, անուշ,  
քո սրտի վիշտը խորին.  
Լմնաս հեզ ու անուժ  
որերի չար ժխորին:

Կհիշես, կասես. զարձիր  
և կայըի մորմոքը զուր,  
հուշերի այրող ցանցից  
կրացվեն աչքերն իմ ցուրտ:

Յեզ կգամ. ու կտեսնես,  
վոր յես ել մարել եմ վորը.  
և կիշնի զիշերը հեզ  
մեր սիրուն՝ դառն ու անցվոր:

Ուզմամ ես՝ արել դարձնեմ մի ճրագ  
և առնեմ քո գուանը կախեմ,  
բայց ի՞նձ ի՞նչ, ի՞նձ ի՞նչ՝ յես անձարակ  
և սիրալո՛ լի խոց ու աղետ։

Ուզմամ ես՝ թողնեմ քեզ և ընկնեմ անապատ  
և զնամ գեպի մահ ու անկում,  
բայց միթե, միթե հար ու համապաղ  
չպիտի հիշես ի՞նձ, անգնեթ...

Ո, պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես քեզ, Տիգրան,  
չե՞ վոր մարդ մեկ և սիրում, չե՞ վոր մարդ մեկն և սիրու-  
մի նայիր, տես, ի՞նչ ես դու, ի՞նչպես ես գերվել սիրուն-  
ն, պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես քեզ, Տիգրան:  
Այդ վոչինչ, վոր այրվում ես դու, վոր բոց ես հուընթան,  
վոր սիրարդ լիցուն ե, վոր սիրարդ չի համբերում.  
Էլ պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես լեզ, Տիգրան.—  
չե՞ վոր մարդ մեկ և սիրում, չե՞ վոր մարդ մեկն և սիրու-

Որերում դառն ու ցնցող  
հուշի պես պատիր, անե,  
շողում ես այրող բոցով,  
իմ անհաս ցնորք, Մանե...

Սիրում եմ ժպիտը վառ,  
աչքերը՝ մեղմ ու մաշող,  
ո, սեր իմ, այնպես դժվար,  
որերում այնքան անշող...

Ո՞, յերանգ, յերանգ, յերանգ,  
զլութական մորմոք մի սին,  
իմ սիրտը՝ ձեռքիդ գերած՝  
ծանրել ե խաչն իը ուսին:

գնում ե հեռուն խավար,  
վոր հուրն իր մահին տանե.  
կանգնել ես ճամբրիս ալվառ,  
անողոք ու զմւը Մանե:

Կանգնել ես՝ ասում ես, կաց,  
ժպտում ես՝ չոյանքը սուտ.—  
ո, յերը ես՝ սիրտս դրկած՝  
մարելու, չար իմ, անզութ...

Ո, պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես քեզ, Տիգրան,  
 չե՞ վոր մարդ մեկ և սիրում, չե՞ վոր մարդ մեկն և սիրու  
 մի նայիր, տես, ի՞նչ ես դու, ի՞նչպիս ես գերովել սիրուն.  
 ո, պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես քեզ, Տիգրան:  
 Այդ վոշինչ, վոր այրվում ես դու, վոր բոց ես հուրհրան,  
 վոր սիրաբդ լիցուն ե, վոր սիրաբդ չի համրերում.  
 Ել պիտի սանձես քեզ, ո, պիտի սանձես լեզ, Տիգրան.—  
 չե՞ վոր մարդ մեկ և սիրում, չե՞ վոր մարդ մեկն և սիրում

Որերում դան ու ցնցող  
հուշի պես պատիր, անե,  
շողում ես այրող բոցով,  
իմ անհաս ցնորք, Մանե...

Սիրուժ եմ ժպիտըզ վառ,  
աչքերըզ՝ մեղմ ու մաշող,  
ո, սեր իմ, այնողես գժվար,  
որերում այնքան անշող...

Ո՛, յերազ, յերանզ, յերազ,  
զլութական մորմոք մի սին,  
իմ սիրտը՝ ձեռքիդ գերած՝  
ծանրել ե խաչն իը ուսին:

գնուժ ե հեռուն խավար,  
վոր հուրն իր մահին տունե.  
կանզնել ես ճամբրիս ալվառ,  
անողոք ու զուր Մանե:

Կանզնել ես՝ տսուժ ես. կաց,  
ժպտուժ ես՝ շոյանքըզ սուտ.—  
ո, յերը ես՝ սիրտըս գրկած՝  
մարելու, չար իմ, անզութ...

## 1.

Ապրում եմ իս որերը դառն  
խավարում անշող ու մութ,  
զիտեմ, վոր անցել ե անդարձ  
արքեցումը այրող ու սուտ:  
Գիտեմ, վոր վերջինն եր, զնուր  
այն յերազը՝ մորմոք ու չոր,  
հայացքը նրա սայրասուր,  
հոլումը՝ գերիշք ու տանջող:

## 2.

Գիտեմ վոր մի որ կմարի  
այն հուրը՝ մաշող ու բարկ—  
և կիշնի շիրիմի քարին  
դարերի մամուռը չար:  
Գիտեմ վոր պիտի մնջի  
նրա լեզուն՝ խարող ու հեզ—  
և սրտումն իմ պիտի հնչի  
այն յերգը, վոր հյուսել եմ քեզ:

## 3.

Քեզ, քեզ, իմ միակ, իմ վորբ,  
 իմ սիրտը մաշող, իմ սեր,  
 յես քեզ եմ տվել անցվոր  
 իմ որը՝ և քեզ եմ ուղել:  
 Յեզ աստղըդ շողում և այսօր,  
 ո, բարձր և շողում, պինհուս,  
 և սիրտը անոգ և, անզօր,  
 կանչում և անունըդ ահա...

## 4.

Բայց սեր մի ուրիշ, մի դաժան,  
 լափող մի ալ հուր և խոցել  
 հոգին իմ անզեն, անպաշար,  
 վառել և կարոս մի բոցեւ,  
 իջել և սրտին իմ տկար,  
 սրտին իմ սիրող ու խոր,  
 այրել և վատքերիդ ընկած  
 իմ սիրտը՝ համբ ու անխոս...

## 5.

Յեզ սի և նա, սի և ալսօր,  
 վոր բոցել և հոգին իմ լուռ  
 և առել ե՝ վորպես գայիսոն՝  
 իմ սիրտը—մարող ու զուր:  
 Ո՛, կին և նա, կին մի յերազ,  
 ապրող մի ցնորք և անե—  
 և հուրն իմ, դալուկ ու մեռած,  
 նա կարող և յերկինքը հանել:

## 6.

Եարող և մղել ինձ դեպի մահ,  
կարող և գարձնել հերոս,  
նա, նա, վոր կանզնել և հիմա  
ճամբեքին խմ՝ չար ու ներող:  
Նա, վոր զրկել եր ինձ սուտ,  
վոր շոյում եր խմ սիրտը բարակ,  
վոր թացել եր աչքերը անսուդ  
և փռել եր հուրհերը վարար:

## 7.

Վոր զիտեր աչքերն իր ազաթ  
մշտշել ամպերով լուսե  
և սրտի գաները փակած՝  
մորմոքով յերազներ հյուսել:  
Վոր զիտեր տանջել դառնանուշ  
և զարկել սրտերին հաղար—  
և մնալ յերազ մի վառ հուշ,  
խոստում մի՛ պատիր ու չասած:

## 8.

Ո՞, մարմինը նրա ոձաձե,  
ժպիտը նրա անսարս  
կարող են առյուծներ սանձել  
և հազարն արձակել անսանձ:  
Յեզ հազարը կարող են ուզել  
մարմինը նրա առաձիզ—  
և հետքերը իրանց կորուսել  
ո, յերբ նա ասավ. հեռացեք...

## 9.

Կարող ե սեղմել նա ջերմ  
իր իրանը դողդող կրծքերին,  
և այրող իր շնչովը տանջել,  
և շուրթերն արյունել կրքերից:  
Յեվ շոյել նա կարող ե հոգնած  
հազարին, վոր սիրում են՝ անտահ,  
և կարող ե ասել նա. զնա՞  
և հազարը կերթան դեպի մահ...

## 10.

Ո՞, հուր ե նա, հուր ե մարմոք,  
մի յերազ ե, մարմին մի լուսե,  
որերում իմ շրջում ե անհոգ,  
որերում իմ ցնորք ե հուզե:  
Յեվ մունջ ե հողիս մահապարտ.  
յես տեսել եմ մարմինը նրա,  
և խոցել ե իմ սիրտը խավար  
դառն կարոտը անհազ, անփարատ...

Անձրեի տակ ու հողմահար,  
 զիշերի մեջ մի հեք լապտեր՝  
 ով պիտի զգա սիրուս-անտեր-  
 անձրեի տակ ու հողմահար...  
 Ո՞վ պիտի գա ինձ ազատե,  
 դողում և իմ ճրագն ահա՝  
 անձրեի տակ ու հողմահար,  
 անտիրական մի հեք լապտեր...

Ահավասիկ հոգին իմ լի՝  
ամենին մոտ, ամենին խորթ,  
մշտամոլոր ու թախծալի —  
ու դառնահուշ ու խոր, ու խոր...

Ահավասիկ հոգին իմ լուռ՝  
ամենի հետ և հարամերժ,  
իր խորերում — զանձ ակնակուռ  
և անկրկիցն, և անավեր. . .

Ահավասիկ և յես՝ անող,  
ահավասիկ սիրան իմ դժվար.—  
ինչպես զիտեմ քո կործանող  
շունչը բոցե, որ իմ հրվառ...

Ինչպես զիտեմ, վոր պիտի դաս,  
քո սուր սրով սիրալս խոցես—  
և անողոք՝ այրես ընկած  
իմ դին անզարդ ու քարկոծես...

Ահավասիկ հոգին իմ զուր՝  
աշքերը սուր, լեզուն տկար,  
հետքերը սին բարկ ավագում  
և հողմածեծ, և անվկանդ...

Անրախտ եմ, անող եմ, անտեր եմ, անտռն,  
 լեցուն և հոգին իմ ցավով մի անանց,  
 սիրում եմ և սերն իմ այրուժ և, խանդում.  
 անրախտ եմ, անող եմ, անտեր եմ, անտռն:  
 Ապրում եմ որերն իմ խավար մի բանտում,  
 և լուռ սպասում եմ, վոր դուրս բանան.  
 անրախտ եմ, անող եմ, անտեր եմ, անտռն,  
 լեցուն և հոգին իմ ցավով մի անանց . .

Եկրթա հոգին իմ հուր,  
մի որ զադար կառնի.  
Ել չի տանջվի իզնւր...  
Եկրթա հոգին իմ հուր,  
թողած գահեր թափուր,  
սիրտը հողին զարնի...  
Եկրթա հոգին իմ հուր—  
մի որ զադար կառնի...

Յեզ մի որ կասեն ձեզ, վոր հանգավ նրա սիրաբ՝  
և չկա այլես խենթ Շայիր — Տիգրան.

Կհշեք նրա յերդը, կարոտով կկանչեք նրան,  
բայց մի որ կասեն ձեզ, վոր հանգավ նրա սիրաբ...  
Յեզ կիշնի թախիծը ձեր սրտին, վոր բիրտ եր,  
վոր գիտեր դողալ միշտ իր բախտի դռան,—  
կկանչեք...բայց կասեն ձեզ, վոր հանգավ նրա սիր...  
և չկա այլես խենթ Շայիր — Տիգրան:

Կղառնա շըջանն իմ, կմարեն աչքերը—  
 և կզա այն որը՝ անխուսափելին,  
 և ել ում յերգեմ յես, և յերգեմ ել բնչ,  
 յերբ կանցնի շըջանն իմ, կմարեն աչքերը...  
 Ո, գիտե՞ք, գիտե՞ք դուք տապնապի ցավերն իմ,  
 յերբ հոգին, ահեղը, կախված ե թելից.  
 և կզա քամին ու կմարեն աչքերը՝  
 և կիջնի խավարը, անխուսափելին...

Միում և սիրան իմ անզոր,  
վորպես մի կրակ անթեղ,  
այրում և հուրըդ անզով  
սրախս զիշերում—կանթեղ:

Կանչում և անունդ հեռու,  
գողում և հուրհուր, անզուսազ.  
խավար աշխարհի խորերում  
ընկած և սիրորս անհուս:

Վորպես մի քար—ապառաժ  
ձնշում և մութը նրան,  
իմ սիրար սիրող, հրամաշ  
ընկած և քո խուլ դռան:

Անցիր, ով սեր իմ, անդարձ,  
մարիր քո լոցերը դուր,  
կարոտրս այրող ու դառն  
խոցիր քո սրովը սուր:

Խոցիր, թող լուռ քարանա,  
թող լուռ համբանա լեզուս.  
իմ սիրոր՝ վորք ու անահ՝  
իր խաչին խաչված Հիսուս:

Հիշեցեք ինձ յերբ կլինեք տխուք,  
հիշեցեք ինձ յերբ կլինեք ուրախ.  
և զիշերին, յերբ կըակն և մխում,  
և արեին, յերբ որերն են քաւրաւ

Յեվ ժխորին, յերբ հոգին և մնջում,  
և խոսում են աղմուկները տաղուուկ,  
հիշեցեք իմ սիրուն՝ անահ զնչու  
և որերն իմ, վոր այրում են, հաղթում:

Յեվ ժամերին, յերբ կլինեք մենակ,  
կոտարանաք ոտարներին ոտար՝  
հիշեցեք ինձ, վոր խաչն ուսիս հենած  
բարձրացա յես խավար իմ Գողգոթան:

Հիշեցեք ինձ, հիշեցեք ինձ և զուք,  
վոր մոխիրն իմ պիտի փուեք քամուն.  
առըեցի յես խավար, անհուշ բանառում  
և զնում եմ՝ ասպետ մի անանուն:

Յեվ ասացեք աշխարհներին հեռու,  
թե նա ապրեց՝ ոտար մի հյուր մեր մեջ—  
և պիճակվեց անշող մի որ վերուստ  
նրա սրտին՝ հրամորմոք, անշեջ...

Եսրող ե հանկարծ մի զիշեր զիշերը լինել այնպես ահավոր,  
խավարը լինել այնպես խեղդամոթ ու խավար,  
կարող ե, կարող ե յերբեք, ել յերբեք չըացվել առավտա-  
յել զիշերը լինել դառն մի զիշեր և այնպես ահավոր:

Իմ սրտումն ել այն որը զիշեր մի կիջնի աշնավառ,  
ուալուկ դառնություն մի կայրի իմ հոգին անցավոր.  
Կարող ե հանկարծ մի զիշեր զիշերը լինել այնպես ահավոր  
և խավարը՝ լինել մահաշունչ և այնպես սրտավեր ու խավար

Ահավասիկ՝ ավտզներով հուրհան  
անցել և մութ խավարները իմ հոգին,  
և ծեծել են բարակ թերը նրա  
ագռավները և հողմերը մահաղին։ —

Յեվ իջել և սև գիշերը չարաշունչ  
աշքերին իմ, հուշերին իմ ու սրտին.  
Վորպես վերջին տերեսաթափ և աշուն՝  
դամնացել և հոգիս անզոր այս ցրտին։

Դառնացել և, մենացել և համր ու լուս,  
ահավասիկ՝ խորթացել և բոլորին,  
ահավասիկ՝ գալկացել և նա իդուր  
և մարել և գիշերում չար ու խորին։

Ահավասիկ՝ նայեք իմ վորբ ձեռքերին,  
իմ աշքերին՝ մահաղալուկ և անփայլ։ —  
Իիշեք այսոր, վոր հրասիրու ձեր գերին  
իջել և արդ դեպի վերջին ճանապարհ։

Առեք, առեք մարող վողջույնը նրա,  
աշնանարե ժպիտն անզոր ու տկար, —  
բարի հիշեք իմ որերը հուրհան  
և իմ հոգին՝ անվերադարձ ու վկա . . .

## ՀԱՏՎԱՄ

... Յես ով եմ...

Աչքերս բացել եմ—տեսել եմ մեր տունը աճող,  
տեսել եմ սեղանը մեր տան՝ լիառատ,  
հոսել են որերն իմ զուլալ կարկաչով—  
հազար ճամբաներ են բացվել իմ տուած...

Սիրել եմ իմ տունը—

մեր տունը՝ փարթամ, անվերան,  
բոլոր բարեկամ, ազգական հեռու և մասիկ հյուրերին  
ամեն իրիկուն սպասել եմ՝ կանգնած մեր դռան,  
վոր գան ու խոսեն ու լսեմ վառ հուշերը մարած որերի

Աւսել եմ հետո յես քանի՛ դպրոցում,

քանի՛ անուններ են սրտիս վրաներ,

քանի՛ սն են անցել և այրվել իմ հոգու հնոցում

քանի՛ սն են թողել և շողել՝ և անցել գնացել—հրանես

Սիրել եմ հաղարը սրտով իմ կարուտ,  
կարծել եմ, թե այս եւ հենց այս եւիմ սերը միակ է մի  
թողել եմ հաղարը՝ հաղար ճամբերին քարրարուտ  
և ծով աշխարհում բայնարձակ ելի մնացել եմ անող, անկարող, ու զնուն պատճառ չ

Ծնկել եմ հետո յես հեռու մի քաղաք ցրտաշունչ,  
ցնդել եր որերն իմ, այրել են, անցել են խնլառ,  
իջել և սրտին իմ գուման մի տաքնապ մահաշուրթ  
և վերջը ընկել եմ հիվանդ, արնարամ ու տկար...

Նայել եմ զողզող ձեռքերին իմ բարակ ու մաշված,  
տեսել եմ արյունն իմ հոսող և ալվառ—  
և սուր կարստով եմ ապրել իմ որերը վերջին ու հաշված,  
կարծել եմ, թե մահն ե' իջել և սրտին իմ ալվարդ:

Այն որը, այն որը տաել եմ թերթիկ մի բարակ և անթով,  
նայել եմ իմ շուրջը, հեռուն ու սրտին՝  
և ձեռքըս զբել և գաման իր յերազը խանդուտ,  
և սիրտըս զալուկ մի մորմօք և ապրել՝ հրահուր ու ցրտին:

Հիշել եմ որերն իմ անցած և անդարձ,  
հիշել եմ թողած իմ հուշերը անհուշ, —  
և նիրհ մի՝ անծիր՝ անանուն և անուշ՝  
փակել ե աչքերն իմ խորունկ, տենդավառ...

Անցել ե այն որը սրտիցն իմ հազար քարավան,  
 հազար ու հազար կարուսներ են կանչել մշուշից,  
 հազար զանդակներ են կոչել իմ հոգին դառնավանդ՝  
 և սիրտը մարել ե, մարել ե, լրվել ե ուժից...

\* \* \* \* \*

Ո՛, յեթե նոր ու նորից ինձ մի հույս, ինձ մի լույս շողշողաց  
 մի ձեռք սիրաջերմ իմ ճակատը շոյեր—  
 յես նորից կելնեյի հրավառ՝  
 յերգող և ապրող մի պոետ...

Անունները անդարձ, անմար  
կանչում են հեռու մշուշից,  
և իժ սիրաը՝ մի հուշ անմահ  
տկար ե, ընկել ե ռւժից:

Յեզ գաժան մի սուր որսայր,  
և խոր մի կարոտ խանդահուր  
ավերել են հոգիս անմայր  
մարտում այս՝ կենաց և մահու:

Յես այնուեղ եմ—հեռվում մի շող,  
ցնորք մի, յերազ մի անե,  
և այսուեղ եմ—յերդով նիշող  
որերն իմ՝ սուրող հրանետ:

Յեզ իժ սիրաը՝ անհուն մի ծով՝  
զարկվում ե յերկու հավերժին...  
Ո՞ւ, ինչ դառն ի զարում ցնցող  
լինել յերազող մի վերջին...

որունս առաջաւահան պայմանագիր  
ուղարկել ունենալ ու առաջաւահան  
առաջաւահան առաջաւահան ու առաջաւահան

Ո՞վ պիտի զգա այս զիշեր, այդաբացին այս անեղ  
մեր տազնապը մահազին, կորուսաները անտեսիլ,  
անողնական սիրաը մեր՝ հեռու ժխոր հանդեսից —  
ո՞վ պիտի զգա այս զիշեր, այդաբացին այս անեղ:  
Դառն և որը մեր զարհաւր, մեր կարոտը՝ խելանեղ,  
մեր աչքերը՝ տենդավառ և հոգին մեր՝ մեղկ ու սին,  
և այս հրվառ որերին, այդաբացին այս անեղ  
ո՞վ պիտի զգա մահազին մեր տազնապը անտեսիլ...

Դառն և մառնա զարդի և ի թօ  
մէնքը առ առ առ առ առ առ առ  
բառը և առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ

Իջան յերազներն իմ, հուշերն իմ,  
անցյալն իմ կորավ խավարում.  
Հիմա յերկաթել եմ ուժերն իմ:  
Լանգնել եմ ահեղ աշխարհում:

Կանգնել եմ, նարում եմ հեռուն,  
արև և ծորում ճանապարհն իմ  
և սիրտը դողում ե, յեռում,  
այրում և հոգիս հրապարն իմ:

Թոշում են թերն իմ, տանում են  
դեռի հեռուները բոսոր,  
ձայնում, անունում են, այդ ում են  
լանչում ու տանջում ամեն որ...

Ահա՝ զնացել են, հասել են  
բոլորը, բոլորը վաղմւց,  
ինձ ել շփոթել են, ասել են,  
վաղմւց և ասել են՝ հնուց...

Ու յես յերազել եմ, սպասել եմ,  
կարծել եմ. կդան՝ լաւնեն,  
ահա՝ և իմ որն ե, հասել ե—  
ու յես մնացել եմ անզեն.

Հիմա յերկաթել եմ ուժերն իմ,  
այրել եմ հոգիս հողում,  
թաղել եմ ցնորքն իմ, հուշերն իմ,  
դալիս եմ և ինձ քարկոծում.

Ել ով ե հիմա հավատում ինձ,  
ել ով ե լսում կարոտիս,  
իմ ցավը խորհնուկ, անպատճեմ ե,  
և հուր ե շողում իմ որտին:

Բայց մեկ ե. ել ուշ ե՝ դալիս եմ,  
ճամբիս խարույիներ եմ վառել,  
հոգիս անտապակ ե՝ տալիս եմ,  
իմ սիրաը մաքուր ե՝ առեք...

Առաջին ամեն ունի  
պահը, ու այս բարձրական  
առաջին ամեն ունի  
ուժը, ու առաջին ամեն  
առաջին ամեն ունի  
առաջին ամեն ունի  
առաջին ամեն ունի  
առաջին ամեն ունի

## ՎԱՂԵ

### 1.

Այսոր յես մի նոր յերգիչ՝  
հյուսում եմ տաղերըս հողե.  
դիտեմ, վոր կյանքը ինձ քիչ  
որեր ե բաժին թողել  
Դիտեմ, վոր մի որ հանկարծ  
կմարի իմ արել շողշող—  
և դիշեր մի՛ սև ու ճնշող  
կերթա իմ հոգին անդարձ.

### 2.

Գիտեմ, վոր հեռու և մութ  
մի կայան կա որերըս հաշվող.  
յերբ հասնեմ ափերին անգութ՝  
կմնջի իմ լեզուն—աշուղ,  
կերթամ յես իմ տունը վերջին,  
իմ տունը՝ խոնավ ու ցուրտ.  
աչքերիս բոցը ել չի,  
ել չի մնա վառ ու հուր...

## 3.

Կմնա ամենից բաժան  
իմ սիրտը—արև մի անմար—  
և լուռ կայանիս այնժամ  
կփռվի հուրհուր ճանապարհ  
կզնդա զողանջն որերի  
զալիք և արև—արեւառ՝  
ու ու կայանումն իմ զերի—  
կզդամ առավոտը զվարթ:

## 4.

Կզդամ, կլսեմ հոգի տուկ  
յերգերը Արեւութանի,  
և սիրտը՝ հպարտ, մխիթար՝  
ժողիտը հողին կցանիւ  
կզդամ քաղաքները հսկա  
փոված աշխարհում ամեն—  
և հեռու շնչերը կզդամ,  
վոր պիտի Արեւ քամեն:

## 5.

Հեռավոր կարուտներ հազար,  
բյուրաբյուր կանչեր կլսեմ,  
սրտիս լայներին վսեմ  
կշողան որերը ազատ:  
Յերեք, ել յերբեք մի մարդ,  
մի շունչ, մի կյանք, զիանք,  
յերբեք չի տեսնի անզարդ  
իմ սիրտը հողում և հեք:

## 6.

Ամենը հիշելու կզան  
ամեն առավոտ ու գիշեր,  
քարվաններ շորորուն, զնդան  
իմ սիրաբ, կորած, կնիշեն, —  
թե՝ ինչպես մոլար մի սիրու,  
նկուն և անզոր մի մարդ  
իր կույր աչքերով անթարթ  
աշխարհը տեսավ անծիր:

## 7.

Թե՝ ինչպես Արել հրե  
քանզեց աշքերի շղթան՝  
և սիրաբ նրա պարեց,  
և սիրաբ նրա թնդաց:  
Թե՝ ինչպես մի համբ ասպետ  
բացեց իր լեզուն բացե՝  
և մահը նրան զալեց,  
և սիրաբ նրա խոցեց:

## 8.

Յեզ հեռու ամենից, մենակ,  
և լի ամենի շնչով՝  
իմ սիրաբն ել չե կամենա  
հեռանալ աշխարհից աճող:  
Հայացքըս հոգուս վոսկելար  
ազեղից քաշած հուր-նետ՝  
կթռչեմ հեռուները, խելառ՝  
կայանըս թողած անհետ:

## 9.

Նորից կսուրամ արագ—  
 իմ սիրտը՝ կրծքիս վահան,  
 կասեմ, վոր բերել եմ ահա  
 զանձերս բյուր և առաս:  
 իմ շուրջը—ամենը նորոգ,  
 ամենը—լցված հրով  
 հազար սրտերից գորով  
 կծորա իմ սիրտը անհոգ:

## 10.

Ամենի ժպիտը լուսե  
 կկաթի խորերը հոգուս  
 և կտամ ինչ վոր ուղեն—  
 սրտումը—հազար խոկուժ,  
 չազար կարոտով լցված,  
 ամենի հոգուն ծարավ  
 կը անամ իմ սիրտը ալվառ,  
 կը շեները քարած:

## 11.

Ել ուր ե, կասեմ, մեր հին,  
 մեր հին Յերկանը բորիկ,  
 վորբերը—կժերը ուսին—  
 արջող փողոցները կոպիտ:  
 Ել ուր ե բուլվարը մի բուռ,  
 իր վիզը ձգած մի կարապ,  
 պավիլյոնը,—սյուները ծուռ—  
 գիշերն ու ցերեկը պարապ:

## 12.

Ել ո՞ւր են ծառներում կորած  
յերեք նստարանը անթիկն  
ու վրան դանակով փորած—  
Արամը, Արտիկն ու Ժորան...  
Մուխսին ել չկա շվաքում  
լրագիր առնողի կարոտ.—  
Հազար կոկորդներ են ճաքում  
կանչերից իրիկուն, առավոտ:

## 13.

Ե՛ հեյ, ինչ լավ ե, կասեմ,  
ապրելլ ինչ լավ ե այսոր՝  
և սիրալս—խենթ մի բազե—  
կփոխ թերը հզոր։  
Կփոխ, կճախըի հեռուն,  
հազար աշխարհներ նորել, —  
ամեն տեղ, ուր մի որ, յեռուն,  
իր շունչն եր քարերում խորել։

## 14.


Ամեն տեղ, ամեն տեղ ազատ—  
սարերին, դաշտում ու ձորին—  
ամեն տեղ գետինը նազան՝  
իր կուրծքը բացած արորին,  
Յեվ սիրալս նորից կըշըջի,  
նորից նա մի ծով կդառնա,  
և նրա խոքրում կհանգչին  
հազարը և բյուրը խառնակ։


## 15.

Ամենը իմ սիրաը կդան—  
 և յես, վոր մի տուն եմ անփակ՝  
 աշխարհը այնովես կզգամ,  
 ինչպես մի մանուկ անհագ:  
 Յեվ այսոր յես մի նոր յերգիչ՝  
 հյուսում եմ տաղերըս հողե.  
 զիտեմ, վոր կյանքը ինձ քիչ  
 որեր և բաժին թողել...


## 16.

Բայց մի որ նորից կդամ,  
 բայց մի որ նորից կշնչեմ.  
 այն որը ամենը կզգան,  
 վոր զանգը—իմ սիրաը—հնչեց:  
 Այն որը, այն որը նորից  
 ամենը ինձնով կշողան՝  
 և հազար սրտերի խորից—  
 իմ յերգը անհուն կդողա...





USM 9-110 5 1971 P.



Գ Ի Ն Ը  
500,000 ռ. անդր. դրամ.

Հասպիկը զբեց նկարիչ Հ. ԿՈԶՈՅԱՆՔ,

Բ. Զ. Պ. Ա. 1148

Տիրամ 325 որինակ:

Տպագր. տրեստի 1-ին





A 66832

ԳԱԱ Համապատ Գիտ Պրադ.



220066832